

## Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

(Արվեստագիտության թեմանածու)

### «Ա. Ր Ա. Ր Ա. Տ» - Ն ՈՒ ԵՐԳ ԵՐԱԺԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ, կրոնական միակ հանդես և ոռուամայ մամուլի հնագույն օրգան «Արարատ»-ը, որ իր կրոնական, ազգային, գրական-բանասիրական, գիտական և հայագիտական բաժիններով մեծապես նպաստեց հայոց պատմության, գրականության ու արվեստի ուսումնասիրությանը և սնեց ու դաստիարակեց հայ գիտնականների մի ողջ կաճառ, իր էջերը լայնորեն քացեց նաև եղած-երածտության, և, մասնավորապես, հայ երաժշտության խնդիրների արծարման ու լուսաբանությանը: «Արարատ»-ում տպագրված և հայ երաժշտության հարցերին վերաբերող նյութերի առանձնացումը, դասակարգումը, քննադատությունները գիտական մշակումը կարող էր մի մենագրության ծրագիրը դառնալ: Ամսագրին մեջ՝ նոր գոյության հիմնամյա պատմաշրջանում երևացած ու մեզ մետաքրքրող հույսերը հսկրավորվում են մետղալ չորս կետերի շրոջ. ա) ժամանակի հայ երաժշտական ընթացիկ կյանքի արտացոլումը, բ) նախորդ դարավեցի ու երկար դարակարգի հայ երաժշտական մշակույթի զարգացման հետ կապված մի քանի կարևոր երևույթների քննությունը, գ) հայ մին երաժշտության պատմության ու տնտերքան հարցերի լուսաբանությունը, և դ) երաժշտության ընդհանուր պատմության վերաբերող առանձին խնդիրների պարզաբանումն ու միջազգային երաժշտական կյանքի մի շարք երևույթների անդրադարձումը: Սույն նորմանում համառոտակի կանգ կառնենք Շշված կետերից միայն առաջինի վրա:

#### Ա

Ժամանակի երաժշտական ընթացիկ կյանքն արտացոլում են՝ այլնայլ լուրերն ու հաղորդումները, ազգային-կրոնական, եկեղեցական, և ժամանական-դարցական առօրյայի փառերը, գրախոսություններն ու առանձին ստեղծագործողներից նվիրված նոդվածները;

Այլնայլ լուրերն ու հաղորդումները, բնականաբար, խայտարեսուն պատկեր են ներկայացնում: Դրանցից իմանում ենք, թե ե՞րբ և ինչպիսի երաժշտական գրքեր են հրատարակվել Էջմիածնի տպարանում կամ այլոր, թե ազգային երաժշտական ի՞նչ երևույթներ մթնողութ են ստեղծել տեղում և գաղթօչախններում, և կամ թե ինչպիսի՞ն է եղել Մայր Աթոռի վերաբերմունքը դեպի մեր այս կամ այն ստեղծագործողը և այլն: Դժվար է պատեհ խիստ դասակարգում կատարել: Որոշակի պատմաշրջանի հայ երաժշտական կյանքի ուսումնասիրության առում շահեկան տվյալներ են՝ օրինակ՝ Պոլսում Եր. Տեր-Անդրեապանի ձեռնարկած աշխարհաբար Չարականի մասին տեղեկությունը<sup>1</sup>, Մադ. արք. Օրմանյանի հրահանգով, Պեղմբարչի և Աստվածածին եկեղեցու երաժշտական Սր. Բը-ժըկյանի<sup>2</sup> եկուուական ճաշակով պատրաստած մանկական ճոկ երգարանի վերաբերյալ տեղեկությունը<sup>3</sup>, և կամ Էջմիածնում հայ կամավորների հավաքին ու մի ամբողջ գիշեր տևած իմքնարուխ երգեցողության վերաբերող տեղեկությունը<sup>4</sup> և նմանները, որոնց վրա մեկ-մեկ ծանրանալ մեզ մեռուն կտաներ: Ավելի կարևոր է ի մոտ ծանոթանալ այն հաղորդումներին, որոնք ցույց են տալիս Էջմիածնի վերաբերմունքը դեպի Կոմիտաս Վարդապետը: Պարզվում է, որ Մայր Աթոռը պարբից մեթ Ականանելով Կոմիտասի բացառիկ տաղանդը, ամեն կերպ աջակցել է երաժշտին՝ բարձրագույն կրթություն ստանալու և կյանքում իր առաքելությունը կատարելու գործում: «Ընմարան ավարտած սամերից արժ. Կոմիտաս Վարդապետը, —կարդում ենք ամսագրի էշերում, —որ եղանցողության ուսուցիչ էր նմարանում անցյալ տարի և այս տարի Թիֆլիզում

<sup>1</sup> «Արարատ», 1902, էջ 1127:

<sup>2</sup> «Արարատ», 1904, էջ 328—329:

<sup>3</sup> «Արարատ», 1915, էջ 289:

պ. Եկմայանին էր աշակերտում, իրավունք առաջալ Նորին Վեհափառությունից արտասահման գնալու և երաժշտական արվեստում կատարելագործվլու: Հայր Կոմիտաս վարդապետի ուսման ծախըն հոգալ խստացել է հայտնի բարեգործ պ. Աղեքասանդր Մանեաչյանը, որին այդ առթիվ ազգին Վեհափառ կարողիկուն յուր առաքելական օրինությունն համեսցավ տալ հասուկ կոնհակով<sup>4</sup>: Ավելի ուշ, Էջմիածնին ոչ միայն գրիարաց ընդունում է արտասահմանում կրթությունն ավարտելով վերադարձած Կոմիտասին, այլև սրտանց ողջունելով նրա՝ նայ եկեղեցական երաժշտության մեջ աշխարհիկ-ծովով վշրդական միմբերը որոնելու և հայտնաբերելու ձգությունները, «մեծ ապագա» է կամեմատնում կոմպոզիտոր-երաժշտագետին: Անմա թե ինչպես է արձագանքել ամսագիրը՝ Կոմիտասի կազմակերպած երեկոյթերից մեկին: «Ծրագիրը հարուստ էր և բազմազան՝ հոգեւոր և ծովովլուական երգեր, դասախոսություններ երաժշտության պատմություններ, զավեշտական գեղեցիկ արտասահմանություններ: Շատ հնասարքրական էր մանավանդ և Կոմիտասի դասախոսությունը, որով ապացուցանում էր, թե նայոց եկեղեցական եղանակները ծովովլուական են՝ շարականները համեմատելով ծովովլուական երգերի հետ: Բոլոր ներկա եղած հանդիսականները երաժշտական ծաշմարիտ վայելք ստացան երեկոյթից և ամենագոյն սրտով և ոգնությամբ ի թողին դաշիճը: Հ. Կոմիտասը, կարող ենք վստահությամբ ասել, մեծ ապագա ունի նայոց երաժշտության պատմության մեջ, ցանկանք, որ նա լոր բարի գզուումներն իրագործել կարողանան»<sup>5</sup>: Վերջապես, ամսագիրը խորին հարգանքի տողեր ունի նվիրված Կոմիտասին, նաև նրա գործունեության հետագա տարիներին վերաբերող արտասահմանյան եղոյթների անշությամբ: «Ս. Էջմիածնի միարան և. Կոմիտաս վարդապետը, գրված է սպանելոյ, —Փարիզի «Salle des Agriculiteurs»-ում և «L'Ecole d'Art»-ում տվյալ է նայկական համեմոք, մի քանի սիրողների մասնակցությամբ: Գաղղիական՝ հատկապես մասնագիտական երաժշտական երկարաթերթը՝ «Le Courrier Musical» № 24, «Le Mercure Musical» № 28—24, «Le Monde Musical» № 23 և «L'Aurore» օրաթերթը իրենց դիմու: 21-ի համարում միացմանը են խոսում այն համեմոքների մասին: Խոսք չեն գտնում գովելու նայոց պատարագի արարության եղանակների քաղցրությունը, վիստությունը և ներդաշնակությունը: ...Բայց Կոմիտաս վարդապետից մասնակցությունն են ունեցել օրինոր Ծովիկ և Մարգարիտ Բարպարանի նախարարությունը և պ. պ. Մուղունյան, Շաբ-Մուրացան երգել և նվազել են. իսկ պ. Չորամյան մի գեղեցիկ դասախոսությամբ ծանոթացրել է ծովովլականներին հայոց բանահյության հետ: Բոլոր մասնակիցները իրենց շնորհան երգերով և նվազով հիացրել են հանդիսականներին և

իրենց մայունին երկրի համեմարք փայլացրել: Դնանք պատող բանիմաց և երաժշտական արվեստին տեղական կարծիքը» և այլք: Միանով չեն սպավում ամսագրում Կոմիտասին վերաբերող հյութերը, ինչպես կոտսենենք սոորու: Բայց այս փոքրիկ հայորություններն իսկ, փաստերի լևզվով զատ ամենայնի գծուն են Էջմիածնի մեռ Կոմիտասի ունեցած հարաբերությունների իրական պատկերը:

Ազգային-կրոնական կյանքի փաստնը, որ ընդհանրապես տրված են դարձյալ հաղորդումների ձևով, հիմնականում վերաբերում են ավանդական տարբեր տոների, ինչպես՝ Հոհիսիմանց-Գայիսիանց, և Սահակի և Մաշտոցի, առհանանց, կառողիկներ Էջմիածնի, Գևորգ ՚ի-ի անվան ու նմարանի բացման տարեկան երեկոյին ու թիվիսում հաստատվող որևէ նոր դպրոցի, այլև որիշ առիթներով կազմակերպված իրական-երաժշտական երկեղություններին: Դրանք ունեն ճանաչողական շշանակարգություններ: Ասեմք՝ Գևորգան նմարանի բացման տարին, տոնակատարությանց միջոցին «երրենց զիմսորական նվազածուաց խմբին նղանակներ, և մեր դպրաց ազգային ընտիր և գևոգելու երգեր» են ննշել<sup>6</sup>, որտեղից պարզ է, թե նվազականումը հրավիրված է եղիք: Զինվորական հրավիրված նվազականի հանդիպում ենք նաև ավելի նոր ժամանակներում, երբ այն հայ գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյակի առիթով Էջմիածնում անցկացված շքեղ հանդիպություններին մի նավազյալ փայլ է տվիլ<sup>7</sup>: Բայց 1890-ական թվականներին ճնամարանը ունեցել է և իր սեփական նվազականումը, որ հանդիս է եկեղեւ Վարդանաց տոնի առթիվ: «Հանդար բացվեց «Նորամբաց» շարականու: Աշնունեան կարդացին ճառեր, հատվածներ Եղիշինց և ուսանւորներ մեր նորագույն բանաստեղծներից: Ժնմարանի նվազականումը և երգեցիկ խումբը փոփոխարար նվազում էին և երգում»<sup>8</sup>: Նման հանդիպությունների ժամանակ ճնամարանի երգեցիկ խումբը կատարել է ոչ միայն հոգեւոր, այլև աշխարհիկ բովանդակության ազգային երգեր<sup>10</sup>, որոնց մի գգայի մասը նայենասիրական ազնիվ զգացումներ արծարելուն զոգընթաց, երաժշտական եվոլուպական ճաշակի ընկալման ու տարածման միջոց է ծախայի մեր մեջ և՛ հնառաքրի է, որ Էջմիածնի միջավայրը, պատրաստակամությամբ ընկալելով առաջադիմական այդ նովելը, նիշալ երգերի ունով նույնիկ նորեր է ստործել, մերժ ընդ մերթ հրատարակելով դրանք ամսագրիս էջերում, հայկական ճաշանշիւ-

<sup>4</sup> «Արարատ», 1896, էջ 189:

<sup>5</sup> «Արարատ», 1901, էջ 217:

<sup>6</sup> Բերված են մի ամբողջ շաբ հիացական կարծիքներ Ս. Հարությունյանի թարգմանությամբ: «Արարատ», 1907, էջ 142:

<sup>7</sup> «Արարատ», 1874, էջ 345:

<sup>8</sup> «Արարատ», 1918, էջ 16 (նավելված ժԱ. Բամարի):

<sup>9</sup> «Արարատ», 1892, էջ 170:

<sup>10</sup> Տե՛ս «Արարատ», 1879, էջ 319:

րով, ինչպես օրինակ՝ «Յաւուր օրմնութեան բացման ճեմարանի Ուղերձը»<sup>11</sup>, եռաձայն Ուղերձը, «Առ Վիհանքան Հայուագետն Ամենազն Հայոց Տ. Տ. Մակար»<sup>12</sup> և այլն։ Տարբեր համեմաներին նվիրված բազմաթիվ հաղորդումների շարքում անհաված ուշագրավ են երկուսը ևս, որոնք նկարագրում են Երևանում Ալոն Հազարյան, և Թիֆլիսում Մարիամյան-Հովհաննյան օրինութաց դպրոցների բացման տպախմբությունները։ Երկու առիջենորով է, պատարագի ընթացքում, Բայ դեռատի օրինութեար կատարել են երգեցիկ դպիրների և սարկավագների պաշտոնը։ Ալոն Հազարյան դպրոցի աղջիկների մասին Զ. Տեր-Զաքարյանցի գրում է. «Դարպոցի օրինորդ քան և չորս թվով միակերպ մաքուր Բագուսովի կատարում էին երգեցիկ դպրաց պաշտոնը պատարագում ուսուցչի դպրապետությամբ.... Այն տեղ էր տեսնելու՝ թե օրինութաց ներդաշնակ, քաղցրածայն և միջնակային ժամկետությունը որքան կզմակեցնեին ժողովուրդը»<sup>13</sup>։ Ավելի նետաքրքիրն այն է, որ այս, առաջին հայացքից նոր կարծեցալ, տեսարանը Մարիամյան-Հովհաննյան դպրոցի օրինության ժամանակ, կուսանաց Անապատի և Ստեփանոս եկեղեցում, պարզվել է՝ «ըստ վաղեմի ստվորության»։ «Ինչպես որ կանչապ որոշված էր, ժամը 10-ին Գեր. Գարդիել արքակի կուպու Առաջնորդ մասուց սուրբ պատարագը կուսանաց Անապատի սուրբ Ստեփանոս եկեղեցվույն մեջ, և պատարագին սպասավորեցին պարկեշտառուն կուսանըն ըստ վաղեմի ստվորության՝ սարկավագությամբ»<sup>14</sup>։

Աստիճանաբար դորս գալով սոսկ հաղորդումների շրջանակներից, շամեկան նյութեր ենք գտնում նաև բուն եկեղեցական կյանքի վերաբերյալ։ Դրանցից թիշտառակելի են՝ Թիֆլիսի հայոց եկեղեցների սարկավագների ու դպիրների «Խնդրագիրը» Մայր Աթոռից՝ իրնենց հյութական անձուկ դրույթյան բարելավման առնչությամբ<sup>15</sup>, Սեբ. քի. Սարգսյանցի հոդվածը՝ գյուղական քահանաների հյութական վիճակի մասից<sup>16</sup>. և հատկանու քահանայցուների ընտրության ու պատրաստության կանոնների «Մրագիրը», որտեղից իմանուն ենք, թե մասնավորապես երգեցողության ասպարեզում քահանայցուներից ներկա դարակըներին էլ դեռևս պահանջվում էր՝ «շարականների և տաղերի անխայ երգելը համաձայն հմի կամ ճայնագրյալ շարականի»<sup>17</sup>։

Թատերական ներկայացումները լուսաբանող գրություններում մեզ հետաքրքրողն այն է, որ նրանցում ներկան համեմատում ենք արտահայտությունների, որոնցից հետուուն է, թե ինչպայ ներկայացումները Արեվիլան Հայաստանում և տրվել են՝ նայած տեղին

ու պայմաններին՝ որոշ երաժշտական ձևավորումն։ Հայ եղած տվյալների, աղբյուին է եղել պարագան, օրինակ՝ Խորեն նախակոպոսի «Արշակ Բ»-ի երևանյան ներկայացման դեպքում, և Սարգսին կից հոգեոր դպրոցի մեջ դամիլճում, որտեղ՝ «զինվորական երաժշտաց լոկին ու երրորդ զանգակի ձայննեւ նետ բացեցավ վարագույք և կրնեցան Հայոց դրմազարդ լիրանց գագաթները»<sup>18</sup>։

Գայով դպրոցներին, պետք է ասել, որ «Արարատ»-ը միշտ է լուրջ ուշադրություն է դարձել նրանցում Բայ դեռատիկ երգի ուսուցումը պատշաճ մակրադակի վրա դնելու խնդիրն։ Դեռևս ամսագրի ստացման համարներում գլուխված մի քանի հյութից, ինչպիսիք են՝ վաճական դպրոցների «Կանոնադրությունը»<sup>19</sup>, Շուսաստանի Բայ թեմական դպրոցների «Կանոնադրությունը»<sup>20</sup> և այլն, երևում է, որ ուսանելի սարկաների շարքում կարևոր տեղ է հատկացվել, մի դեպքում շարականի երգեցողությանը, մյուսում՝ ընթանրապես ազգային երգ-երաժշտությանը։ Նույն պայ շրջանում ամսագրի խրմագործությունը նաև մի բանիմաց հոդված է լուրջ ընձայում ապագա ուսուցիչների կրթությունը վերաբերյալ, որտեղ խելամիտ շատ առաջարկների կողքին այն մասին, թե «ուսուցաց կրթությունը պետք է ընթանա ամրութ ազգային կյանքի հեղեղի մետ, և պետք է իմի յորդանց ազգայնութան, յորդանց դարու՝ գիտակցության, գտնման և լուսավորության արտադրությունը» և այլն, երգ-երաժշտության շորջ հաստատագրվում է հետևյալը։ «Պարտավորյալ է ամսան աշակերտ [Վարժապետանոցի] սկզբուն երգեցողություն։ Չոթակի վերայ ածալը և երաժշտության տեսական մասը (1)։ Պարտավորյալ չէ՝ դաշնամուրը (Փորտեպիանո), երգենուն (օգանը)։ Ամենափոքը այնքան պետք է լինի, որշափ և որպիսի կարությունը կա կանոնավոր երգեցողության ծողովդրական դպրոցի մեջ»<sup>21</sup>։ Անոնեան ամսագրի էջերում հրատակում են նաև երաժշտության ուսուցման մեթոդական հարցերը շոշափող գրություններ ևս, որոնցից թիշտառակելի է Գր. Նրգնկանցի հոդվածը։ Նրանում հեղինակը առաջարկելով՝ երեսաների մետ երգով պարապել 8—9 տարեկան հասակից, ուսուցման հիմնական միջոցը դարձնել լուղությամբ յուրացնելը, բայց մետ անցնել ձայնագրությունը ևս, երգել տա ինչպես մեկ-մեկ, այնպես էլ խմբովին, սպոնսեալ ոչ միայն հոգեոր, այլն աշխարհիկ երգեր, բարձրացնում է դասավանդման համարական (սինթետիկ) և վերլուծական (անալիտիկ) մեթոդների խնդիրը ու գոնում, որ տարրական դպրոցներում հայտականարմար է կիրառել երկրորդը։ «Առաջին

<sup>11</sup> «Արարատ», 1874, էջ 350—351։

<sup>12</sup> «Արարատ», 1885, էջ 505—507։

<sup>13</sup> «Արարատ», 1877, էջ 486—487։

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 484։

<sup>15</sup> «Արարատ», 1905, էջ 568։

<sup>16</sup> «Արարատ», 1907, էջ 892։

<sup>17</sup> «Արարատ», 1908, էջ 10։

<sup>18</sup> Ա. Մարտության, Մեր ազգին թատրոններուն համառոտ տեսությունը, «Արարատ», 1870, № 3, էջ 280։

<sup>19</sup> «Արարատ», 1889, № 5, էջ 4։

<sup>20</sup> «Արարատ», 1889, № 2, էջ 141։

<sup>21</sup> Թե ինչպես պետք է պատրաստել մանկավարժ ուսուցիչներ, «Արարատ», 1870, № 6, էջ 47։

նախամակված աշակերտները նախապես սովորում են երաժշտական առանձին ձևաբերք,—գրում է նա, —յոթհակն, նետո անցնում են ավելի դժվար վարժությունների, և այդպես շարունակելով աշխատում են ավելի բարձրանալ դեպի բարդը: Երկրորդ եղանակը առաջինին բակատիպն է կազմում առաջ ամսանախառարակ մի քանի երգեր են սովորում, նետո մի առժամանակ անցնելուց զիմի, ուսուցիչ օգնությամբ աշակերտները ամրողը տարրների (Ելեմենտների) են բաժանում, սոցա և առանձին ձայնների, որոնք և միմյանցից չուկում են յորյաց բարձրությամբ, ուժով և երկարատևությամբ: Առաջին եղանակը ավելի գործածական կարող է համարվել մասնագիտարար երաժշտություն սովորելու ժամանակ, իսկ տարրական ուսումնարանում միայն միակ և բողորդին տարրական և բնական միջոցը պետք է համարի վերլուծական (անախտիկական) եղանակը»<sup>22</sup>:

Գրահատարարություններում քննադատվում են ճամանակագրական երգարաններն ու երգեցողության դասագրքները, երաժշտական ժողովածուներն ու առանձին ստեղծագործությունները, ինչպես և երաժշտագիտական աշխատությունները: Բայց սրաց անհրաժեշտ է ավելացնել այն մատենախոսությունները ևս, որոնցում քննվում են՝ նաև երաժշտների գիտական հետաքրքրություններին ուղղակիորեն վերաբերող հայագիտական երատարակությունները: Ամսագրում լուրջ խոսակցության առիջ է սվեյ Արեմիյան Հայաստանում լուս տեսած ստացին «Զայնագրյալ մանկական երգարան» իսկ, Եղմ. թի. Երգելեանի աշխատափորտթյամբ: Երգարանը նախ գրախուել է Սահմակ Սմատուինին (այն ժամանակ՝ սարկավագ), իրավացիորեն հանդես թրելով խիստ մոտեցում<sup>23</sup>: «Մեղու»-ի էջերում տպվում է արևամարիական մի պատասխան: Ս. Սմատուինին նորից է հանդես գալիս, այս անգամ ավելի խիստ քննադատությամբ: Հետո ամսագրի խմբագրությունը ներկվի հանձնարարում է Դ. թի. թի. Հովհանիսյանին մի անգամ էլ անդրադառնալ Եղարանին, (ինչպես և նոյն հետինակի՝ հայկական ճայնագրության Դասագրքին), ու Հովհանիսյանը և նրայու է ուժենում ուղանք արդարացի քննադատությամբ<sup>25</sup>, թեև վերջում ավելացնում է և այն, որ «Կ. Նիկ. Թաշճանի աշակերտներից միայն Եղմիկ քանանան է աշխատում, իսկ մյուսների մետքն անգամ չեն երևում»: Ինչ վերաբերում է հիշյալ Դասագրքին, նրա բուն հիմունքնե-

<sup>22</sup> Գ. Երգելյանց, Դասավանդման խորհուրդներ, «Արարատ», 1892, էջ 1068 (Երգեցողություն):

<sup>23</sup> Մի քանի խոր Եղմիկ քանանայի «Զայնագրյալ մանկական երգարան» մասին, «Արարատ», 1880, էջ 505:

<sup>24</sup> Դարձյալ ճայնագրյալ մանկական երգարանի համար, «Արարատ», 1881, էջ 182:

<sup>25</sup> Դասագիրք հայկական ճայնագրության (վիմատիկ) և ճայնագրյալ մանկական երգարան անվանյալ գրյաց վերադասարքություն, «Արարատ», 1881, էջ 500:

ին, ապա Կոմիտասը ևս մի առիջող պարզ գրում է, թե «բարեկրոն տեր Եղմիկ քահանա Եղմելիան մեր արևելյան պարզ յոթենակը տակն ու վերա արավ, կարծելով, թե ելորպականի համապայն է մերն է»<sup>26</sup>: Խոկ Եղմարանի մասին արված քննադատական խիստ, բայց ողջամտի դիտողությունները համազ գումար են այն բանին, որ Եղանում՝ երգերը մանկացն աշակերտական ու համապատասխան չեն, երբեմն բնանազուիկ կերպով «ելորպականացված» են, պատամում են խորքերի ու եղանակների անհամապայնության դեպքեր, վերջիններս էլ (Եղանակները) պալաշատ են, և որ կարևոր է՝ առաջարակ մանկական երգարանի համար մատչելի և ոճով ազգային նյութը (Ա՝ խորքերը, և՝ երաժշտությունը) պետք է բաղկի, միմնականում, իսկ ժողովական բանակուտյան գանձարանից: Եղմ նարկ է Եղմէ, ի պատիվ «Արարատ», թե նա այն բան լավ պրոպագանիկ երգարան կազմելու պահանջունակ կարող է բոլոր ու մեզ մոտ ի վերջու երապարակ ենակ ու կիրակելու ընդունակ երաժշտություն է, մասնակի Սպ. Մելիքյանի: Ու երբ վերջինն լոյս ընծայեց երգեցողության իր Դասագիրքը (Քիմնականություն մասնակի ժողովական, ազգային ու նաև բուն ելորպական ճաշակով համարված և դասակարգված երգերով), ամսագիրը ողջունեց այն<sup>27</sup>: Ուշագրավ է մի պարագա, ինչպես ընդհանրապես արևելահայ, այնպես էլ, մասնավորապես, Էջմիածնի միջավայրը, ընդլայնով Եղմիկ քահանայի կատարած բնագրուիկ «ելորպականացվածների» դեմ, միաժամանակ իրապես լայնախոն մոտեցում է հանդես թրելու այն արդյունավոր փորձին, որով Սպ. Մելիքյանը իր Դասագրում գտնելուն էր նաև «համաշխարհային նայունի երաժշտների գործերից, ինչպես օր. Մուցարտի, Շումանի և այլ նեղինակների, որոնք փոխադրված են հայերեն և աշքի են ընկենում որպես աշխոյդ և կենարանի գործեր, որոնք ունեն ժողովուրդական բնույթով»: Ամիսին. ամսագիրը իր էջերը սիրով տրամադրել է տակալին երիտասարդ Սպ. Մելիքյանի մի գրահուսության ևս, որը նեղինակը ընդհանական Շահման Սիմենի կազմած տարրական ճայնագրության «Ուղեցոյցը»<sup>28</sup>, տեղին պնդում է, թե նայ դպրոցներում ճայնագրության ուսուցումը հարկադրու է սկսել ոչ թե Էսի Շեվիկի «Քվանչանական», այլ միջազգային «գնային» դրույթամբ<sup>29</sup>, հետո

<sup>26</sup> «Արարատ», 1898, էջ 112:

<sup>27</sup> Տև Մուրեն Աքելայ, Դասագիրք երգեցողության (Ա. և Բ. տարի, ժողովածու հայ ժողովրդական, ազգային և ելորպական միաձայն և երկկայն երգերի, կազմեց Սպ. Մելիքյան), «Արարատ», 1918, էջ 390:

<sup>28</sup> Սպ. Մելիքյան, Ինչ սիստեմով պետք է անցնել երաժշտություն մեր դպրոցներում, «Արարատ», 1902, էջ 1158:

<sup>29</sup> Գործ՝ որ վաղուց հաջողությամբ ճեղմարկել էր արդյուն Ա. Եկմայանը Ներսիսյան դպրոցում: Տես մեր նորվածք՝ Մակար Եկմայլան, «Էջմիածն», 1958, թ—Գ, էջ 56:

անցնելով հավական էլ (Լիմոնջանի դրույտունը): Հայ ժողովրդական (մամավան գեղջոկ) երգի անապատությամբ պաշտպանության դիրքերից ճշուված դիպոլ քննադատություն է Կոմիտասի գրախոսականը, և. Եղիազարյանի՝ Փարիզում հրատարակված «Recueil de chants populaires arméniens»-ի առաջին գրույին վերաբերյալ<sup>30</sup>: Ժիշտ է, այսեղ Կոմիտասը տակալին չի տարբերում հայ գեղջոկների ժամանակականը՝ քաղաքացին-ժողովրդականից, ու նրա մի-երկու միտքը այն մասին, թե «Արարի արտասուրը»՝ «բողոքական եկեղեցու երգ է (choral)», «Հերիք որդենակը»-ի եղանակը՝ «տամական», իսկ «Կիհիկիա»-ինը՝ «նորմանական» է և այլն դեռևս քննելի են: Սակայն, ցուց տալով, որ Եղիազարյանի հրատարակած երգերը (որոնցից լոկ մեկն է հայ գեղջոկ-ժողովրդական՝ «Զիմ գլխին»), ձայնագրության ու ներդաշնակաված կամ փոխադրված են ոճական խաթարումների հաջանակություն ունեցող և այլ մի շարք սիմպերով, սկզբունքային հարց է բարձրացնում նաև, եթե գորում է: «Սեր կարծիքով հայ ժողովրդական երգերը դաշնակելուց առաջ պետք է քաջ հմուտ լինել հայ ժողովրդի պատմական, բնական և ազգային պայմաններին, եղանակի կազմության ոգուն, ոճին, բառերի իմաստին, մեր ժողովրդական տաղաչափությամ, ժողովրդի երգեցության և արտասանության հանգամանքներին և էլի մի շարք այլ բաներին, ասա ձեռնարկելու դաշնակելու և հրատարակելու»: Մ. Եկմալյանի ներդաշնակած «Պատարագին» նվիրված Կոմիտասի գրախոսականը իր բովանդակությամբ այնախին է, որ դրան հարկ է անդադասնական՝ հայ եկեղեցական երաժշտության մեջ բազմապատճեան առաջացման ու զարգացման խնդիրների առնությամբ: Այսուղ միայն շեշտներ, որ Կոմիտասը հիշար հողովածուն մի ամրող շարք քննադատական մանրակրկիս դիտություններ անելուց հետո, ըստ արժանվույն զնանաւուելով «Պատարագը», նորակացնում է: «Հարգաի երաժիշտ այ Մակար Եկմալյանը մեր եղանցության ամայի անդաստանի մեջ ներդաշնակության անդրանիկ բուրատանը տնկեց: Սրտանց ուրախ ենք, որ հայեր այս կարող ենք պարծել, թե մենք էլ ես չենք մնացել վեր գեղարվեստի և կատարեագույն երաժշտության զարգացումից»<sup>31</sup>: Եկմալյանի կարառուն պատասխանի մեջ էլ<sup>32</sup>, որը խմբագրությունը հրատարակել է լոկ «Փ հարգան ա. երաժշտագիտի», Ժիշտ մկանումներ կամ, ինչպես կտևենք տակալին: Ամսագիրը գրախոսական քննադատականներով արձագանքել է նաև՝ «սեր բեղմավոր երիտասարդ երաժշտներից» Ա. Տեր-

Ղունդյանի «Մանկական երգերին»<sup>33</sup>, Գ. Չորեցյանի (այն ժամանակ՝ սարկավագ) մշակած երեք խմբերին (ազգային օրմեներգ «Տէր կեցո», «Երբ որ բացուին» և «Մայր Արարափ») ու Ս. Բարխանյանի «Արևելյան պարերին» (դաշնամուրի համար)<sup>34</sup>, այլև Ռումանու Մելիքյանի երկու երգին («Աշնան երգ», և «Վարդը»)<sup>35</sup>, որ հաստատագրված են ժամանակին հայ երաժշտագիտության մեջ խմբրված հնատարքի գաղափարներ: Քննադատը («Յ. Յ.») մի քանի հակասական մորքը ունի Ռ. Մելիքյանի ու հրա երգերի մասին, բայց նա հստակ գիտակցում է այն պարագան, որ Մելիքյանը հայ երաժշտության մեջ անհատական ստուծագործության ուղղության «ասմենից շնորհածի ներկայացուցիչն է» ու հետևյալն է գրում: «Որքան և կարևոր լինի եկեղեցական և ժողովրդական երաժշտության մշակույթինը, այնուամենակ հայ երաժիշտը չպահի սահմանափակի միայն այդ գործնենությամբ... Պետք է զատկ երաժիշտ-գիտականը երաժիշտ-ստուծագործուից, որպեսզի արդյունավետ լինեն երկրութ էլ աշխատանքը: Այդ անշատումը չորս ուղղությամբ կարելի է կատարել. 1. Կարելի է գեղարվեստական տեսականից արժեքավոր ժողովրդական և նեկայացական երգերը մշակել՝ բազմապատճեան երգեցության կամ նվազի վերածելով, ինչպես այդ անում է Կոմիտաս վարդապետը: 2. Կարելի է ժողովրդական երաժշտության ոճով մշակել այդ ոճին համապատասխանող հոյութեր (իրուս օրինակ հիշենք պ. Սպ. Մելիքյանի «Զմոնն անցավ»-ը, Կոմիտաս վարդապետի «Կարարի երգը» և այլն): 3. Կարելի է եկեղեցական և արևելյան ոճերի խառնուրդից մի նոր միացյալ ոճ ստեղծել (ինչպես այդ փորձել է, թեև, ի դեպ, բավական անհաջող կերպով, պ. Բաղդասարյանը իր «Մի՛ լար բրուկ»-ով) և վերջապես 4-րդ՝ կարելի է բոլորովին անուն առնելով հայկական երաժշտությունը (ուզում է ասել՝ երաժշտա-ազգագրական զույգերը—Ն. Թ.): Նվիրվել բացառապես անհատական ստեղծագործության: Ուղղությանց այս չորս տիպերը կեղծերի կերպնացում իր կատարելագործման համար: Միայն առաջին և վերջին ուղղությունները ունին իրենց համեմատարար զատկան ներկայացուցիչները: Այս 4 ուղղություններն էլ անխրստ իրենց հաստուկ և կարսոր դեռ ունին մեր երաժշտական գրականության մեջ, ուստի և ցավակի է տեսնել, որ փոխադրձ ատելություն և արժամարհամբ է տիրու դրանց միջև: Բոլոր այդ ուղղությունները մի ընդհանուր պատվանդան պետք է ու-

<sup>30</sup> Կոմիտաս, Recueil de chants populaires arméniens, («Հավաքածն նայոց ժողովրդական երգերի», Արարատ, 1900, էջ 867:

<sup>31</sup> «Արարատ», 1898, էջ 117:

<sup>32</sup> Մ. Եկմալյան, «Արարատ» խմբագրության, Արարատ, 1898, էջ 824:

<sup>33</sup> Oberthon, Մանկական երգեր ձայնակցությամբ դաշնամուրի, երաժշտություն Անուշավան Տէր-Ղեփողյանի, «Արարատ», 1914, էջ 1152:

<sup>34</sup> Ռուբեն արեւա, Երեք խմբերգ, Արևելյան պարեր, «Արարատ», 1913, էջ 674:

<sup>35</sup> Յ. Յ., Երկու երգ, «Արարատ», 1912, էջ 76:

նենամ՝ հայ ոգին, որը միաժամանակ և այդ 4 ող-  
դությանց միացման կետն է»: Խարկն, այժմ, ավելի  
քան միտու տարի հնառ, դժվար չէ վիճարկել քնն-  
նադատի՝ պատող ևս քրիված մտքրից մի քանից:  
Հական այս է սակայն, որ նա ճիշտ ժամանակին  
և ընթանրապես շատ ողջամիտ մտտեցմամբ քարձ-  
րացրել է ազգային երաժշտական ստեղծագործու-  
թյան ամենահրատապ խնդիրներից մեկը, ընդ համեն  
պարզություն հայ արվեստի տարրեր մշակների միջև, ընդ համեն  
տիրապետած «փոխադարձ ատելության և արքա-  
մարհանքի» վիճակը, որը և մեր արդի մի շաբա մե-  
նագործություններում, զգիւն ինչու, պրոլիա է յի-  
նում շատ անգամ, ի վեա ճշմարտության և պատ-  
կերիող երևոյթի հակասություններով լի համակող-  
մաններթյան:

Երածշտագիտական աշխատություններից ամսագրի Էջերում գրախովան է Ի. Պոպովի «Արմենական մազեկա» գրքովը<sup>36</sup>: Մատևեախոսը Եղիշելով, որ «հայկական աղքատիկ երածշտական գրականությունն այն աստիճան խնդուկ դրույթան մեջ է, որ այդ մասին ամեն մի աշխատության լուս տևանելը յուրաքանչյուր հայ երածշտի և երածշտափերի բուն ցանկությունը պետք է համարել», ցավոր, չափազանց խիստ մոտուցմամբ, Պոպովի աշխատությունը ներկայացնում է «որպես մի չտեսնված կատարյալ գրագություն»: Հարկավ, Ի. Պոպովը պարտավոր էր միշտասակիլ այն աղբյուրները, որոնցից օգտվել է, և, մասնավորապես, «Բրատская помошь по остра-давшим в Турции армянам» գրքի այն Էջերը<sup>37</sup>, որինք ցույց է տալիս Ա. Տեր-Հովհաննիկյանը: Վերջինս էլ սպական, հանուն ճշմարտության, պետք է հետառ միներ, որ Պոպովի աշխատությունը, իր միշյալ և այլ թերթություններով հանդերձ, որպես հայ երածշտության պատմության մի շարք հյութերի համակարգման առաջին փորձերից մեջ, անտարակուու, ողողւեաի էր:

Ըստ ավելի հարուստ ևն թեկող և լոկ այս մատենախոսությունները, որոնք վերաբերում են նաև երաժշտմբի գիտական մետաքրքրություններին, ասացինք: Դրանցից միշտակելի էն՝ Ս. Չոպանինի «Նախապետ Քոչշակի դիվանը» աշխատափրության մատենախոսությունը<sup>38</sup>, որ արծարծվում է Քոչշակին վերագրվող նարեկների և ներինակային

պատկանելության հարցը<sup>39</sup>. Մ. Աքուսաճի պատասխանը «Մուրճի» գրախոսին, ի պաշտպանություն «Հազար ու մի խառ» ժողովրդական հիմանափի երգարանի<sup>40</sup>, որ օգտակար և ուսանելի է հման երգարաններ կազմոյ մեր այժման նոհնեակների համար է. Շարակնոցի ուսւերներ էմինան թարգմանության թվանությունը<sup>41</sup>. Ներսես Տեր-Միքայելյանի «Das armenische Hymnagogium» գրքին հվիրված մատունախոսությունը<sup>42</sup>, թեև չափազանց խիստ<sup>43</sup>. Ս. Վոդ. Ամաստոնու «Հին և նոր պարականն շարականներ» փայլուն ուսումնասիրության գևանառությունը<sup>44</sup>, վերջապես Ն. Աղոնցի «Дионисий Фракийский и армянские толкователи» աշխատության գրադաստությունը<sup>45</sup> և այլն:

Առանձին ատելացարողութերից ամսագիրը հատուկ է շեր և նվիրել Զիվանուն, Կոմիտասին և Նիկ. Տիգրանյանին: Զիվանուն անդրադառնարու և նրա բանաստեղծություններից մի քանից հրապարակ հանելու առիթ է տվել Հ. Խոչվանցի մի հոդվածը («Գյումրի»), որը նեղինակը անհիմն կերպով պահել է, յու Ազգասահմանադրութ հայ աշուները մեծ մասամբ երգում են, իր, տաճիկնեն, և թե ժողովորդն էլ որպատրամք լսում է այդ երգերը: Վ. Մատինյանը փաստացի հոյթերի հիման վրա մերժում է այդ տեսակիւթը<sup>46</sup>: «Ավելասանդրադրութ երը ունեցել է իր մեջ քատրոն շնորհիվ հաղողակատիվ Սյունեցի Անդրանիկի Սիկի-Հակիմազան»:

**40** **Ս. Արենյան**, Ժողովրդական երգարան և «Հացան ու մի հաց», «Արարատ», 1904, էջ 1078:

<sup>41</sup> Էմ. թի. Նազարյան, «Շարական»-ի մասին, «Արտաւ», 1904, էջ 677: Տես առև նույն նույնակի՞ «Վերջին խոսք» Շարական-ի մասին («Արտաւ», 1905, էջ 72):

**42** Ա. Խոստիկյան, Das armenische Hymnarium, von Nerses Ter-Mikaëlian, Leipzig. 1905, «Արև» 1908 էջ 989.

<sup>43</sup> Եվ արդյոք դա չէ պատճառը, որ Ն. Տեր-Միքայելյանի, Տրգչին Բաշվով, Մոթջ աշխատություններկան ծանանակ այնպիս էլ չմոտավ գիտական բան շրաբնառության մեջ:

<sup>44</sup> Ա. Կանայան, Հին և նոր պարականոն շարականներ, «Արարատ», 1911, էջ 1044:

<sup>45</sup> Մերու վր. Մարտինաց, Bibliotheca Armeno-Georgica. IV—Дионисий Фракийский и армянские толкователи, «Արքան», 1917, № 827:

<sup>46</sup> Կ. Մատինանց, Բանաստեղծը և հյուպակը Զհվանի, «Արարատ», 1871, № 11, էջ 415, № 12, էջ 473:

<sup>36</sup> Արշակ Տեր-Հովհաննիս, Ի. Ե. Պոպօվ, Արմանական музыка, Исторический очерк (СПБ, 1910), «Առաջնաւոր», 1914, № 174:

<sup>37</sup> Նկատի ունենք գրքում «Կ. Ս.» սովորագրությամբ հրատարակված «Երկու խոր հայ երածըշտության մասին» բանահմաց հոդվածը: Խնչակն հայորդում է Ալ. Շահվարդյանը, «Զ. Բ. Սարաջևակի հավաստմամբ այդ հոդվածի ներինակը Կոնսուատիին Սոլյմնութիշ Սարաջևն է» (Հայ երածշտության աստմուտան ամենալուստը, Երևան, 1959, էջ 166):

<sup>38</sup> Հովհ. Թաղեսաբան, Քոչակ Նախապետի երգերի  
մի նոր հրատարակության առթիվ, «Արարատ»,  
1902 թ. 1148:

երբ թնդացրել է բատրունական թևի վրա ազգային երգերի արձագանքը, մենց այն օրից Ալեքսանդրապոլու աշողները սկսել են երգել հայերեն, որով մենք հասարակությունը այդ մասին ամելի սեր ու ուսմակրություն է ցույց տալիս: ...ասածին ապացուց կարելի է համարել՝ հասարակության համախելլ ավելի այն սրճանցները, որտեղ համարյա թե միշտ հայերեն են երգում, ինչպես այ. Կարապետ Տաղյանցի սրճանցը, որտեղ երգում է աշոյ Ջիվաճին... Ալմոյանցի սրճանցը, որ երգում է Հովհաննես աշուղը մականվաճայ Խոյթը: Իսկ որիշ սրճանցներում երգում են Թաթոս (Հալեսի) և Մարուի մականուն աշուղները և այլն: Կոմիտասի մասին գրել է Գ. Հովսեփյանը<sup>47</sup> (այն ժամանակ վարդապետ): «Սեպտեմբերի 80-ին յոր 1½ տարվա բացակայությունց հետո վերադարձավ Մ. Աթոռի դարրապետ ու. Կոմիտաս վարդապետ՝ Եվրոպայում կատարած ճանապարհորդությունից: Նա այս ժամանակը գործադրել է մի գեղեցիկ նախարարի համար՝ հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը ծանրացնելու կորուպացիներին»: Հետո գիտ նաև նայանք նորից անդրադառնայով կուպողիտորերածխագետի վերոհիշյալ համերգներին, ամբողջացնում է Կոմիտասան ելույթներից մի ուրուց շարք պատկերը, կարգով տեղեկություններ տալով՝ Փարիզում հայ գաղթականների «Մասիս ալումբ» ում, Ռուսաց երեկոյթում, Գեղարվեստագետների ընտանեկան երեկոյթում և Միջազգային ժողովը դաշտական համերգում (Concert de chansons et danses populaires) հիշած հայկական երգ-երաժշտության, եվրոպական թերթերի ջերմագույն արձագանքների, Կոմիտասի հրատարակած «Հայ քնար» ժողովածուի, La musique rustique արտեպիոնու աշխատության հատվածի, նաև Ցյուրիխում, Ժնևում, Լուգանում և

<sup>47</sup> Գ. Վրդ. Հովսեփյան, Կոմիտաս վարդապետի երաժշտական ճանապարհորդությունը Եվրոպայում, «Արարատ», 1907, էջ 906:

Բերնում, այն ու Ղազարում և Մուրադ-Ռևախիլյան վարժարանում երա տված համերգների ու կարդացած դասախոսությունների մասին նիկ. Տիգրանյանին վերաբերող նորվածը մի կննագրական ակնարկ է, որ գրել է Պ. Մոնոյանցը, կոմպոզիտորի գործունեության 25-ամյակի առթիվ<sup>48</sup>: Ակնարկը շարադրված է փաստերի լեզվով, պատշաճ կերպով գնահատված է նիկ. Տիգրանյանի հայրենանվեր գործունեությունը, ինչպես և երա դերը առհասարակ Անդրկովկասի ժողովուրիների երաժշտական մշակույթի զարգացման մեջ: «Տիգրանյանի երաժշտական բեղմնավոր գործունեության մասին չենք կումեա այստեղ երկար կանգ առնել, — մասում է մեղմակը, սակայն անհրաժեշտ ենք համարում պարան ասել, որ երա գլխակոր արժանավորություններից մեկն էլ այն է, որ նա պեղանտիկ հշտությամբ ծանրագրելով ազգային և արևելյան եղանակները, մեծ տաղանդով գուազ արևելյան երաժշտության համապատասխան և բնորոշ հարմոնիզմացիա նվրուպական մովկիայի տերիխայով և հարմոնիզմվի»: Եվ անդրադառնարով ուսական «Գրաժданու», «Երյացեա Վեճոմուտ», «Նոյօ Վրեմյ», «Պետերբուրգսկա գազետ» և «Նովոսի» լրագիրների արձագանքներին՝ նիկ. Տիգրանյանի Պետերբուրգացան համերգներին, նա նույնական քաղվածքներ է քերում, որոնց որոշ շարքը պատկերը, կարգով տեղեկություններ տալով՝ Փարիզում հայ գաղթականների «Մասիս ալումբ» ում, Ռուսաց երեկոյթում, Գեղարվեստագետների ընտանեկան երեկոյթում և Միջազգային ժողովը դաշտական համերգում (Concert de chansons et danses populaires) հիշած հայկական երգ-երաժշտության, եվրոպական թերթերի ջերմագույն արձագանքների, Կոմիտասի հրատարակած «Հայ քնար» ժողովածուի, La musique rustique արտեպիոնու աշխատության հատվածի, նաև Ցյուրիխում, Ժնևում, Լուգանում և

<sup>48</sup> Պետրոս Մոնոյանց, Երաժշտագետն նիկողապու Տիգրանյան (կննագրական ակնարկ երա 25-ամյա երաժշտական գործունեության առթիվ), «Արարատ», 1914, էջ 163:

